ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

h/h	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7	8
1	Քաղաքական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության մասին հետազոտության իրականացում	Կիրականացվի “Կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը 2012թ ԱԺ և ՏԻՄ ընտրություններում Լոռու մարզում” հետազոտությունը, կամփոփվեն արդյունքները, կկազմակերպվի մարզային խորհրդաժողով հետազոտության արդյունքների ներկայացման և քննարկման համար	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով “Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա” ՀԿ /համաձայնությամբ/	հունվար	“Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա” ՀԿ	
2	Կանանց քաղաքական և քաղաքացիական լիդերության խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	Կկազմակերպվեն քառօրյա սեմինար-պարապմունքներ Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի կին համայնքի կին ղեկավարների ավագանանիների և համար	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով “Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա” ՀԿ /համաձայնությամբ/	Փետրվար	Համայնքային բյուջեներ	

3	Հանրության մեջ գենդերային հիմնախնդիրների լուծման անհրաժեշտության ընկալման և գենդերային զգայնության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Կկազմակերպվեն “Գենդերային հավասարությունը որպես տեղական ժողովրդավարության նախադրյալ և համայնքների կառավարման արդյունավետության բարձրացման միջոց” կլոր-սեղան Ալավերդի քաղաքում և “ ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի և ռազմավարության իրականացումը համայնքների մակարդակում” թեմայով կլոր-սեղան քննարկումներ մարզի 7 քաղաքներում	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով “Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա” ՀԿ /համաձայնությամբ/	մարտ-մայիս	ֆինանսավորում չի պահանջվում	
4	Լրատվամիջոցների աշխատողների որակավորման բարձրացում՝ ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	Կկազմակերպվի «Գենդերային հիմնահարցեր» թեմայով դասընթաց՝ լրագրողների համար, որի ընթացքում կվերապատրաստվի շուրջ 20 լրագրող	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով “Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա” ՀԿ /համաձայնությամբ/	հունիս	Համայնքային բյուջեն	
5	Լոռու մարզում գենդերային իրավիճակի պարբերական գնահատման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Կուսումնասիրվի գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկմանն ուղղված միջազգային փորձը, կմշակվեն Հայաստանի Հանրապետությունում գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկման ցուցանիշների և դրա ներդրման վերաբերյալ	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով “Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա” ՀԿ /համաձայնությամբ/	ընթացքում	ֆինանսավորում չի պահանջվում	

		առաջարկություններ					
6	Լոռու մարզի քաղաքապետարաններում գենդերային հարցերով զբաղվող մշտական մարմնի ստեղծում	մարզպետի հրահանգով կստեղծվեն գենդերային հարցերով հանձնաժողովներ մարզի 8 քաղաքաներում	ՀՀ Լոռու մարզպետարան	Քաղաքապետարաններ /համաձայնությամբ/	առաջին եռամսյակ	ֆինանսավորում չի պահանջվում	
7	Տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) կանանց դերակատարման բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում	մարզխորհրդի նիստերի օրակարգերում գենդերային թեմաներով զեկույցների ներառում	ՀՀ Լոռու մարզպետարան	Համայքապետարաններ /համաձայնությամբ/	յուրաքանչյուր եռամսյակ	ֆինանսավորում չի պահանջվում	
8	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Մարզի բոլոր քաղաքներում կանցկացվեն խորհրդակցություններ /10 խորհրդակցություն/, որոնց կհրավիրվեն մասնակցելու նաև մոտակա գյուղական համայնքների ղեկավարներ	ՀՀ Լոռու մարզպետարան	Համայքապետարաններ /համաձայնությամբ/	ընթացքում	Համայնքային բյուջե	
9	Մարզում գործող ձեռներեցների շրջանում գենդերային հիմնախնդիրների վերհանմանը և գենդերային զգայնության բարձրացմանն ուղղված միջոցառման իրականացում	Կանցկացվի “Սոցիալական գործընկերություն. ՀԿ, բիզնես ոլորտի կանայք և պետական կառույցներ: Քաղաքացիական նախաձեռնությունների տեխնոլոգիաներ” թեմայով կլոր-սեղան քննարկում մարզի կին ձեռներեց-	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով	հուլիս	ֆինանսավորում չի պահանջվում	

		ների մասնակցությամբ					
10	Առողջապահության ոլորտի գենդերային հիմնախնդիրների վերհանում և լուծման ուղիների մշակում	Կկազմակերպվի “Առողջապահության ոլորտի գենդերային հիմնախնդիրները” թեմայով մարզային խորհրդաժողով	ՀՀ Լոռու մարզպետարան	Գենդերային հարցերով զբաղվող տեղական հանձնաժողովներ, մարզպետարանի կրթության վարչություն	Սեպտեմբեր	ֆինանսավորում չի պահանջվում	
11	Հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների որակավորման բարձրացում ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	Կկազմակերպվեն “Գենդերային գիտելիքների հիմունքներ” թեմայով սեմինար պարապմունք մարզի 5 տարածաշրջաններում՝ հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստման համար	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով	հոկտեմբեր	ֆինանսավորում չի պահանջվում	
12	Հանրակրթական դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացում՝ ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	Կկազմակերպվեն «Գենդերային գիտելիքների հիմունքներ» թեմայով սեմինար պարապմունքներ մարզի 5 տարածաշրջաններում՝ յուրաքանչյուր տարածաշրջանից 25 ուսուցիչների համար	ՀՀ Լոռու մարզպետարան	Գենդերային հարցերով զբաղվող տեղական հանձնաժողովներ	Սեպտեմբեր հոկտեմբեր	ֆինանսավորում չի պահանջվում	
13	Կրթության ոլորտի գենդերային հիմնախնդիրների վերհանում և լուծման ուղիների մշակում	Կկազմակերպվի “Կրթության ոլորտի գենդերային հիմնախնդիրները” թեմայով մարզային խորհրդաժողով	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով, մարզպետարանի	Սեպտեմբեր հոկտեմբեր	ֆինանսավորում չի պահանջվում	

				կրթության վարչություն			
14	Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հնարավորությունների ընդլայնում և այդ ուղղությամբ միջոցառումների իրականացում	Կկազմակերպվի “Գյուղական համայնքների գենդերային հիմնախնդիրները” թեմայով մարզային խորհրդաժողով, որի ընթացքում վեր կհանվեն համայքային գենդերային հիմնախնդիրներ ու դրանց լուծման հնարավոր ուղիներ	ՀՀ Լոռու մարզպետարան	Համայքապետարաններ /համաձայնությամբ/	հոկտեմբեր	Համայնքային բյուջե	
15	Հասարակության մեջ կնոջ տեղի ու դերի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականցում	Կստեղծվի “Լոռու մարզի կանայք” խորագրով հաղորդաշար, որ կհեռարձակվի մարզային հեռուստաալիքներով, ինչպես նաև պարբերաբար կտպագրվեն մասնագիտական, քաղաքական, հասարակական ոլորտներում կայացած կանանց ներկայացնող հոդվածներ	ՀՀ Լոռու մարզպետարան	Մարզում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողով մարզային ԶԼՄ-եր	յուրաքանչյուր ամիս		
16	Համայնքներում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Բոլոր քաղաքներում և խոշոր համայքներում կանցկացվեն 12 քննարկումներ, կլոր սեղաններ համայքների ներկայացուցիչների մասնակցությամբ	ՀՀ Լոռու մարզպետարան	ՀԿ- ներ, միջազգային կազմակերպություններ, Քաղաքապետարաններ, համայքապետարաններ /համաձայնությամբ/	յուրաքանչյուր ամիս		